

մար, պատասխան կու տար ի գիմաց Վրաց եկեղեցւոյն, թէ Մեր նախնիք Ս. Գրիգորէն այն հաւատքը ընդունեցան, զոր կը դաւանէին Երուսաղէմայիք եւ Հռոմք, եւ նոյն վարդապետութիւնն աւանդեցին մեզի, այս նկատմամբ «այլ ինչ բռնք եւ խօսք չէին ուրեք եղեալ ի ներքս», եւ կը հարցընէր «իսկ այժմ ուստի եղեն», եւ յիշեցընելով թէ իր գաւառած հաւատքն ալ այն հաւատքն է, զոր չորս պատրիարքական աթոռներն կը դաւանին, կը յաւելուր. «Արք զոր նոցա հաւատն կարեալ է եւ մեզ տուեալ եւ մեր հաւանքն եւ մեր մինչեւ ցայժմ պահեալ, այժմ զիսկը թողուցումք զայն եւ ձեզ հաւատացուք» (Կ. Թղ. 179): Խօսքեր, որոնք Հայաստան եւ Յունաստան յուզուած խնդրոց բոլորովին անտեղեկութիւն կը յայտնեն, եւ սակայն Վիւրիոն կը համարձակի ըսել ի գիմաց Վրաստանի Եկեղեցւոյն, թէ եւ ինքն լուծանցիմ էր իրողութեանց:

(Եւրոպական)

Հ. Ն. ԱՅՐՆԵԱՆ



ՄԻԻԹԵՐ ԳՕԹԻ ԴՅԱՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՆՆԱԳԻՐԱՆԻ ԻՐԱՆԻՆԻՔԸ

Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Ե Ր Կ Ր Ա Ր Կ

ԴՅԱՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԴՅԱՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ

Ս.

ԴՅԱՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ:

(Եւրոպական)

IV.

Եւս առաւել անորոշ եւ մշուշային գծերով է հանգէս գալիս Միսիթար Գօշի Դատաստանագրքի մէջ հին հայոց աշխարհական դատաստանի եւութիւնը: Այս երեւոյթի պատճառը պարզ է: Միսիթար Գօշի ժամանակ, երբ հայաստանն ընկած էր մահմադականների լծի տակ, աշխարհական դատարանների գոյութիւնը հայերի քաղաքական ինքնուրույնութեան անկմամբ կարող էր միայն բացատրիլ բնաւորութիւն ունենալ: Մի քանի տեղերում, որտեղ սակաւաթիւ հայ աւատական իշխաններն ու մեղիները, որպէս աշխարհակալ խաների հպատակ—վասնէր, տակաւին պահպանում էին որոշ ինքնավարական իշխանութիւն, գուցէ նաեւ հայկական գիւղական եւ քաղաքային (համբարների եւ այլ նման հիմնարկութիւնների) համայնքներում սովորութեան իրաւունքի համաձայն փոխադարձ վեճերն եւ գծութիւնները լուծուում էին աշխարհական դատաստանով: Նոյն իսկ մեր օրերում մեծ կենդրոններից յետ ընկած, հայկական խուլ գիւղերում կարելի է ստեպ պատահել որ գիւղական համայնքի մէջ ծագած

անձնական վեճերը, կողմերի փոխադարձ համաձայնութեամբ, վճռում են դատաստանով, որտեղ իրեւ դատաստանը հանգէս են գալիս գիւղի պատուաւոր ծերունիներն, իշխանները, տանուտերերը եւ այլ զիջելու ենք ունեցող անձինք: Թամնայն գեղացի պետք է երթալ գրել, որ Դատաստանագրքի մէջ յիշուած աշխարհական կամ մարմնաւոր դատաստաններին ազգաբնակչութիւնը զիմում էր փոքր ու անշնան գործերի ժամանակ, գործերի, որոնք կարօտ էին լուրջ իրաւագիտական պատրաստութիւնների եւ կարող էին շուտափոյթ, «ձեռնաց վրայ» քննուել եւ վճռուել: Միւնչեւ հոգեւոր դատաստաններն, ինչպէս քանիցս յիշել ենք, ժողովրդի աչքում աւելի մեծ կշիռ էին վայելում. եւ ազգաբնակչութիւն էլ իւր կարեւորագոյն, լուրջ դատաստանական գործերը աւելի յօժարութեամբ յանձնում էր հոգեւոր դատարաններին, որոնք տեղի էին ունենում այս ու այնտեղ պարբերաբար թեմակալ առաջնորդների, յաջորդների այցելութեան միջոցներին:

Աշխարհական դատաստանի դատաւորը, նախագահը թագաւորն էր, կամ իշխանն ու կամ տեղական աշխարհական հրամայողը. «զի ի տեղեւոյ յորում լիցի քրիստոնեայ թագաւոր կամ իշխան — նորա զաշխարհի դատաստան հոգայցեն» (Նախ. գլ. Ե, եր. 27): Այստեղ ըստ Դատաստանագրքի՝ քաղաքացիական իշխանագետի անձնաւորութեան մէջ միացած են նաեւ բարձր դատաւորի պարտականութիւնները: Այս փաստի մէջ մենք տեսնելու ենք իրաւաբանական մտքի զարգացման առաջին աստիճանները, երբ խախտուած իրաւունքի պաշտպանութիւնը կորցնում է իւր մասնաւոր, անհատական բնաւորութիւնն եւ սոցիալական կեանքի զարգացմամբ իրաւական շահերի պաշտպանութիւնը վերցնում է իւր վրայ պետութիւնը: Իսկ պետութիւնն էլ իր գոյութեան առաջին քայլերում կառավարչական բոլոր մասերով մարմնանում է բացառապէս թագաւորի կամ գահակալ իշխանի անձնաւորութեան մէջ:

Միսիթար Գօշը տեղեկութիւն չի տալիս աշխարհական դատարանի դատաւորների մասին: Նախագրութեան Ե, գլխից կարելի է եզրակացնել, որ այդ դատարանը բաղկանալու չէր լոկ մի անձնաւորութիւնից, այլ կառարկուելու էր «ատենի» (եր. 26): Իսկ նախագրութեան Զ գլխում յայտնած խօսքերը՝ «եւ դատաւորին պարտ է ոչ առնուլ զդատաստանն ինքն միայն... այլ երկուս կամ երես արս փորձած գիտնական

ունեն ի դատաստանին, վերաբերում են, մեր կարծիքով, ոչ միայն հոգեւոր դատաստանին, այլ և աշխարհական դատարաններին: Հետեւապէս հոգեւոր դատաստանի օրինակով աշխարհական դատաստանի «ատենանք» պետք էր բաղկանար առաջին դատաւորից, որը լինելու էր թագաւորը կամ տեղական իշխանն, եւ 2—3 դատաւորակիցներ խորհրդակցական ձայնով:

Ինչ տեսակ գործեր էին ենթակայ աշխարհական դատարաններին: Նկատի առնելով, մի կողմից՝ աշխարհական դատաստանի կողմը, որի հետ ծանօթացանք վերը բերած կարծիքներից, միւս կողմից էլ՝ հոգեւոր դատարանների գերակշռող ազդեցութիւնը բնականաբար սպասել է, որ աշխարհական դատաստանի գործունեութեան շրջանը խիստ սահմանափակ բնաւորութիւն էր կրելու: Միխիթար Գօշի Դատաստանագրքի համաձայն բոլոր աշխարհական գործերը պէտք է ենթարկուէին աշխարհական դատաստանի իրաւասութեանը: Այս գրեպքում էլ մեր հեղինակը տալիս է խիստ առաձգական որոշում: Ինչպէս հոգեւոր դատաստանի իրաւասութեան հարցում, նմանապէս եւ այստեղ Միս, Գօշը չէ ընդգծում որոշակի ու կտրուկ կերպով այն սահմանը, որով պարզ գանազանութիւն հռեւոր գործերը աշխարհական գործերից: Յամենայն դէպս «Հայոց Դատաստանագրքի» յօրինողը աշխարհական գործեր տանելով՝ հասկանում է այն բոլոր օրինական խրախուսումները եւ իրաւաբանական կազուները, որոնք նա շարադասել է իր Դատաստանագրքի երկրորդ մասում: «Աշխարհական օրենք» վերառուութեան տակ: Իբրեւ ապացոյց սրան կարող ենք ծանոթել հենց իւր Միխիթար Գօշի խօսքերը. «Եռաջանգոյն գրեցաք զեկեղեցւոյ դատաստան եւ ի նմա կարգեցաք զսահման դատաւորաց եւ զմուսս շահից նոցա, զի առաջին է եւ մեծ: Իսկ երկրորդ մօրն կարգեսցուք զգաւաստան թագաւորի եւ իշխանի եւ ամենայն աշխարհականաց» (Մասն II, գլ. V, եր. 299):

Վերլուծելով Դատաստանագրքի յիշեալ երկրորդ մասի յօդուածները, կարող ենք կազմել Միխիթար Գօշի «աշխարհական գործեր» անուանած իրաւաբանական երեւոյթների հետեւեալ դասակարգները, որոնք ենթակայ էին աշխարհական դատաստանին:

1. Պետական-կառավարչական իրաւունք:

«Թագաւոր, իշխաններ եւ ժողովուրդ» սրանց փոխադարձ յարաբերութիւններն ու պարտաւորութիւնները:

Բ. Զօրք եւ պատերազմական իրաւունք:
2. Գողթուցիւն իրաւունք:

«Անձնական իրաւունքներ, ազատների ու շինականների, տէրերի եւ ստրուկների փոխադարձ յարաբերութիւնները:

Գ. Ընչական իրաւունքներն ու սրանց խախտումները:

Դ. Գաշանց իրաւունքներն ու սրանց խախտումները:

Ե. Ժառանգական իրաւունք: Մի տեսակ խորթ է թւում տեսնել այս իրաւունքը ներկայ բաժնում, հետեւ ընտանեկան իրաւունքից, որը Միխիթար Գօշը զետեղել է «եկեղեցական կանոնների», բաժնում եւ ենթարկել եկեղեցական իրաւասութեանը:

3. Գլխուկն իրաւունք: Վերաբերեալ մի քանի երեւոյթներ, գլխաւորապէս մարդասպաններին. «Ձայղուիկ թագաւորն դատիցի, եւ զայլ եւս դատաստան հասարակաց ի դատաւորսն թողցէ... Իշխանաց մի լիցի զպաւնոյն սպանանել առանց հրամանի թագաւորաց, իսկ զգողսն խրատել իշխան լիցին» (Մասն II, գլ. V, եր. 311):

Արեւում ենք, որ վերոյ բերեալ մի քանի երեւոյթները դասակարգելը չեն կարող բացարձակապէս ընդունել իբրեւ աշխարհական դատաստանին պատկանող: Հոգեւոր դատարանները, որպէս աւելի ազդեցիկ ու տարածուած հիմնարկութիւններ, ընդունակ էին միշտ իրենց վրայ վերցնել այդ տեսակ իրաւաբանական կազուների վիճիւններն եւ իւրաքանչիւր բոլոր անխափան նետախուժել աշխարհական ու եկեղեցական դատաստանների իրաւասութեանց տարբերող սահմանների որոշման մէջ: Վերջապէս շատ քիչ է մոռանալ, որ Միխիթար Գօշի հայեացքով, ինչպէս արդէն յիշել ենք, նոյն իսկ աշխարհական գործերն ենթարկուում են հոգեւոր դատարանների իրաւասութեանը «ի տեղում, ուր ոչ իցին թագաւոր կամ իշխան»:

V.

Իւր Դատաստանագրքի Առաջին մասի V. յօդուածի մէջ Միխիթար Գօշը տեսութեան է առնում դատաւորների վարձատրութեան հարցը: Մեր հեղինակի կարծիքով անհրաժեշտ է վարձատրել դատաւորների աշխատանքը որոշ եկամուտներով, որպէս զի «մի անպատու գործ նոցա կարծիցի եւ տաղտկացեալ ի բաց կացցին ի դատելոյ» (Մասն I, գլ. V, եր. 82):

Բայց թէ ի՞նչպէս, ի՞նչ միջոցներով կարգաւորել յիշեալ վարձատրութեան հարցը՝ արդեօք միանուա՞գ եկամտներով, թէ պարբերական թոշակներով՝ Մխիթար Գօշը շատ անբաւարար ու թերի է բացատրում, թէ եւ ինքն էլ խոստովանում է այդ հարցի մեծ կարեւորութիւնը։ Դատաստանագրքի յօդուածներէ հիման վրայ կարելի է համարձակ ենթադրել, որ դատաւորների աշխատութեան համար չի նշանակուում որոշ ուժեղ կամ թոշակ, գոնե Մխիթար Գօշը ոչ մի տեղ ոչ մի բառով չի յիշատակում այս տեսակ վարձատրութեան անհրաժեշտութիւնը կամ տիրապետող սովորութիւնը։ Ընդհակառակը Մխիթար Գօշը դատաւորների աշխատութեան վերաբերմամբ ի նկատի է առնում կարծես միանուագ վարձատրութեան եղանակը, պատահական եկամուտների աղբիւրները։

Նախ եւ առաջ՝ դատաւորների եկամուտի աղբիւր է համարուում անժառանգ մեռնողներից մնացած ժառանգութեան։ Սակայն այս գէպքում Մխիթար Գօշն ինչ ինչ պատճառներով որոշ սահմանափակումներ է ստեղծում, եւ յիշեալ գոյքը բաժանում է հետեւեալ կերպով. «զի թէ ի սեփական վիճակի կաթողիկոսի իցէ վախճանեալն անժառանգ՝ հայրապետին լիցի ժառանգութիւնն. եւ եթէ ի վիճակի եպիսկոպոսի իցէ՝ յերիս բաժանեցի — հայրապետին եւ եպիսկոպոսին եւ քահանայից ժողովրդեան։ Եւ թէ վարդապետ որ ի նահանգին իցէ եւ զնոյն աշխատութիւն կրէ դատաստանի՝ մասն լիցի եւ նմա. նովին չափերով այլոցն» (Մասն I, գլ. V, եր. 83)։ Երկրորդ՝ դատաւորներին կարող էին վարձատրել ինքեանք դատող կողմերը. «զի թէ որ զկնի վճարման դատաստանին տեսեալ աշխատութիւն նոցա տացէ ինչ նոցա, այնու շատասցին (Անդ)։ Վերջին գէպքում հարկ չկայ կարծել, որ դա կաշառքի են այլ նման վարձատրութեան ձեւեր են, վասն զի որքան մեզ յայտնի է, Մխիթար Գօշը իւր օրինագրքի զանազան տեղերում քանիցս գէտ է խօսում կաշառակերութեան եւ այլ նոյնանման կեղեքումների եւ զգուշացնում է դատաւորներին այդ տեսակ քայլերից։

Դատաւորներին կամաւոր անձնական նուէրներով վարձատրելու սովորութեան մէջ պէտք է տեսնել վարձատրութեան այն եղանակը, որ ընդունուած է վճարելու հոգեւորականներին, իրենց կատարած զանազան եկեղեցական խորհրդների համար՝ «աջաճարմոյր» եւ այլն։

Եւս առաւել իրաւունք ունինք այսպիսի ենթադրութիւն անելու, քանի որ Մխիթար Գօշը նոյն այդ V գլխում կարծիք է յայտնում, թէ ըստ օրենքի կարող են վարձատրութիւն պահանջել միմյայն հոգեւոր դատաւորները, «իսկ աշխարհական դատաւորաց մի լիցի մասն, զի ոչ բնաւորականն են դատաւորք, այլ պատահմամբ»։ Մի փոքր յետոյ Մխիթար Գօշը կրկին աշխարհական դատաւորների վարձատրութեան վերաբերմամբ ասում է. «մի ինչ օրինաւոր լիցի նոցա, զի առաջնորդաց օրինաւորն թողացաւ յաղագս հոգեւոր հատուցմանն» (Անդ 83 եր)։

Մի կողմը թողած Մխիթար Գօշի այդ տեսակ տարօրինակ հայեացքը վարձատրութեան վերաբերմամբ եւ նրա աննշական բացատրութիւնը, փորձենք ըստ մեր անսակէտի լուսաբանել դատաւորների թոշակի հարցը։ Այդ հարցը մեզ պարզ կացուցանելու համար անհրաժեշտ է ի նկատի առնել, թէ ի՞նչ մեծ նշանակութիւն ունեցի սովորութեան իրաւունք Մխիթար Գօշի իրաւաբանական աշխարհայեացքի վրայ։ Նախնական հին դատարաններում, որոնք կրում էին զուտ ժողովրդական բնաւորութիւն եւ որոնց դատաւորներն իւրաքանչիւր անգամ նշանակուում էին ժողովրդի միջից ընտրւած ներկայացուցիչներից, բացակայ էր միանգամայն վարձատրութեան հարցը։ Ժամանակի ընթացքում պետական-վարչական կենդրոնական իշխանութեան զարգացման առաջին աստիճաններում, երբ ի միջի այլոց նաեւ դատաւարութիւնն անցաւ այդ իշխանութեան գլխաւոր ներկայացուցիչների ձեռքը, դատաւորները, որոնք մարմնանում էին թագաւորի, միապետ իշխանների եւ կամ սրանց փոխանորդների անձնաւորութեան մէջ՝ շարունակուում էին սովորութեան իրաւունքի համաձայն նոյնպէս. առանց որոշ վարձատրութեան կատարել իրենց պաշտօնը։ Սրան պայտքով՝ եւրոպական իրաւունքի պատմութիւնն, հին Հրէաստանի քաղաքների դատաւորները ոչ մի թոշակ կամ վարձատրութիւն չէին ստանում։

Հին հայոց իրաւունքի մէջ տիրապետում էին հոմանիշ հայեացքներ, Հայոց պետական կենքի ամենահին պատմութեան մէջ դատաւորների դերը կատարում էին թագաւորները, նախարարները, աւատական իշխանները եւ վերջապէս բարձրաստիճան հոգեւորականները։ Դատաւորական կոչումը կազմում էր նրանց բարձր հասարակական իշխանութեան անբաժանելի

Հասկացողութիւնն, բաղկացողէ տարրը: Դասաւորի պաշտօնը, որպէս մարդկային փոխադարձ յարաբերութիւնների մէջ արգարութիւն, կարգականոն պահպանող մի ոյժ, ժողովրդի Հայեացքով շարժակալած էր Հասարակական իշխանութիւն ունեցող անձնաւորութեան հետ: Վերջինս առանց որեւէ այդ առիթի յատուկ վարձատրութեան վարում էր դատաստան, ինչպէս եւ պետական կառավարութեան վերաբերեալ իր միացեալ բոլոր լիազօրութիւնները: Անշուշտ՝ յիշեալ անձնաւորութիւնները ունէին իրենց եկամուտի աղբիւրները բոլոր այդ եկամուտները որոշում էին արդէն պետութեան ընդհանուր անտեսական գրութեամբ ու նրա ներկայացուցչի անձնական բարեմամտութիւններով եւ վերջապէս ոչ իրրեւ մի վարձագրութիւն կամ թուակ, այլ իրրեւ նրա անձնական սեփականութիւն: Պետութիւնն ու սրա Հարստութիւնն, Հասարակական-իրաւական Նորմերի Համաձայն, Համարուում էր իշխողի անձնական սեփականութիւն:

Միխիթար Գօշի խօսքերից մեզ յայտնի է, որ աշխարհական դատաւորներն իրենց պաշտօնի համար ոչ մի պարտաւորեցուցիչ վարձատրութիւն ստանալու չէին: Անկասկած՝ ժողովրդի սովորութիւնների մէջ տակաւին պահպանուել էին հին դատարանների ու դատաւորների վերաբերմամբ երբեմն գոյութիւն ունեցող Հայեացքների հետքերը, Հայեացքների, որոնց մասին խօսեցինք նախընթաց տողերում: Ինչ վերաբերում էր հոգեւոր դատաւորներին. որոնք էլ ինչպէս արդէն գիտենք, չէին ստանում որոշ թոշակ կամ որեւէ պարտարական մշտական վարձատրութիւն: Գլխաւոր դատաւորը դա թեմական առաջնորդն էր, հոգեւոր իշխանութեան ներկայացուցիչը, որը Հայաստանի քաղաքական ազատութեան անկման միջոցներին, ինչպէս օրինակ Միխիթար Գօշի ժամանակները, հանդէս էր գալիս նմանապէս իրրեւ իր հօտի քաղաքական ներկայացուցիչ: Հետեւեալպէս այս դէպքումն էլ հոգեւոր դատաւորների վերաբերմամբ գործագրուում էր չվարձատրելու այն սկզբունքը, որ տիրապետում էր սովորութեան իրաւունքի մէջ: Յամենայն դէպս երեւում է, որ Միխիթար Գօշի ժամանակներն արդէն սկսել էր աստիճանաբար ձանապարհ հարթել Գատաւորներին առանձին, թէեւ ոչ պարբերական վարձատրութիւն տալու քաղաքաւոր: Մանաւանդ զաւանշայտնի է դառնում Գատաստանապրքի մէջ յիշուած այն խօսքերից, որ հոգեւոր դատաւորները կարող էին

ստանալ դատաստան վերջացնելուց յետոյ կամաւոր նուէրներ-վարձատրութիւններ, երեւի այն Հայեացակէտի հիման վրայ, որ ժողովրդի մէջ ընդունուած էր հոգեւորականներին վարձատրել վերջիններիս կատարած եկեղեցական պարտաւորութիւնների եւ խորհրդների համար, ի շարք որոց, մեր կարծիքով, ժողովուրդը դատում էր նաեւ հոգեւոր դատաւորների կողմը:

Ինչ եւ իցէ Միխիթար Գօշը, ինչպէս տեսանք, ամբողջապէս նշխարելուած է եղել տիրապետող սովորութեան իրաւունքի ազդեցութեանը: Եւ շնայած նոյն իսկ այն փորձին, որ Միխիթար Գօշը հակառակ այդ տիրապետող սկզբունքին՝ դատաւորներին չվարձատրելու սովորութեանը՝ ձգտում է ընդունել իւր Գատաստանագրքի մէջ դատաւորների աշխատութեան իրական վարձան հրաժեշտութիւնն, այնուամենայնիւ նա անկարող եղաւ բաւարար կերպով լուծելու այդ հարցն ու իրականացնել իւր Հայեացակէտը: Դա ստիպուած է եղել միայն մասնաւորապէս լուծել այդ հարցը, այն է՝ յատկացնելով դատաւորների վարձատրութեանը դիպուածական աղբիւրներ, որոնց մասին վերջ խօսեցինք:

(Հարանմանութիւն)

Խ. ՍՄՐՈՒՆԵԱՆ



Կ Ե Ն Ս Ս Գ Ր Ա Կ Ա Ն

1720—1775.

ՍԱՐԳԻՍ ԱՐԶԵՊ. ՍԱՐԱՓԵԱՆ

Ե Ի Ի Ի Ժ Ե Մ Ե Ն Ե Գ Ը

10

(Հարանմանութիւն ինքնին)

Մինչդեռ Սարգիս այսպէս պատրաստութիւն կը տեսնէր երկրաւոր Թաւիտեանկան քաղաքն երթալու՝ Դախախնամութիւնը կարգադրած էր վերին Թաւիտեանկան քաղաքը չուելու: Իր հիւանդութիւնն յաջորդաբար կը մեղմանաւ եւ կը սաստկանար: Բժիշկներու խորհրդով 1773 Փետր. ամսոյ մէջ եկեղեցւոյ բնակարանէն փոխադրուեցաւ քաղաքին օգտուած մէկ տունը, ուր կը բնակէր իր ազգականներով Նաեւ Կ. Պոլսեցի Պետրոս Վ. Մուրաւ-ճախան, Ուրբանեան Դպրանոցի աշակերտն: